

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 օգոստոսի 2013 թվականի N 897-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 91
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրային ծածկագրման կարգը հաստատելու մասին» N 91 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշմամբ հաստատված կարգի՝

ա. 3-րդ կետից հանել «սեկտորների,» բառը,

բ. 4-րդ կետի «գ» ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

գ. 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6. Գծային ինժեներական ենթակառուցվածքների համար ընդունվում են հետևյալ միանիշ հայերեն (լատիներեն) կոդային նշանակումները՝

1) Ա (A) – ավտոճանապարհ.

Ք (C) - կոյուղի.

Գ (G) - գազ.

Կ (K) - կապ.

ՎԻ (W) - ջրագիծ.

Է (E) - էլեկտրական գծեր.

Ռ (R) - երկաթգիծ.

2) գծային ինժեներական ենթակառուցվածքի գտնվելու տեղադիրքին համապատասխան ընդունվում են հետևյալ միանիշ հայերեն (լատիներեն) կոդային նշանակումները՝

ս (u) - ստորգետնյա.

վ (g) – վերգետնյա.

3) համայնքի կտրվածքով տվյալ գծային ինժեներական ենթակառուցվածքին տրվում է քառանիշ ծածկագիր՝ սկսվում է 0001-ից, որի սկզբում նշվում են համապատասխան գծային ինժեներական ենթակառուցվածքի հայերեն (լատիներեն) կոդային նշանակումները՝ ըստ սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերի:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

2013 թ. օգոստոսի 28

Երևան